

ՊԱՏԱՍԽԱՆ՝ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԱՇԱՐԻՆ

(հարցաշար՝ հասարակական կազմակերպությունների եւ լայն շրջանակների համար)

Պատասխանող՝ Դանիել Գևորգյան (անկախ փորձագետ)

1. Արդյո՞ք համայնքների խոշորացման բարեփոխումներն իսկապես օբյեկտիվ եւ օրինաչափ անհրաժեշտություն են՝ տեղական ինքնակառավարման համակարգի զարգացում ապահովելու համար: Ներկայիս համակարգն արդյո՞ք տեղերում արդյունավետ կառավարման ու տարածքների զարգացման համար բավարար հնարավորություն չի տալիս:

Ներկայիս համակարգն այսօր իր զարգացման փուլն ավարտում է, որը արդյունավետ էր, սակայն մեր պետությունը առաջնորդվում է ժողովրդավարական զարգացման ուղիով, որին արդեն իսկ անհրաժեշտ են նոր բարեփոխումներ, այդ թվում և համայնքների խոշորացման ուղղությամբ:

2. Մշակվել է խոշորացման երկու մոդել՝ «փնջային» եւ «շրջանային»: Ծանոթ եք փաստաթղթերին եւ առաջարկվող մոդելների առանձնահատկություններին: Որո՞նք են այս մոդելների ուժեղ եւ թույլ կողմերը: Ո՞ր տարբերակն է, Ձեր կարծիքով, առավել արդյունավետ մեր երկրի դեպքում:

Ծանոթ եմ երկու մոդելներին էլ, կողմնակից եմ ավելի շատ «շրջանային» տարբերակին, քանի որ «փնջայինի» տրամաբանական շարունակությունը հանգեցնում է «շրջանայինի» հաստատմանը, իսկ «շրջանայինը» մեր ժողովրդին ավելի հոգեհարազատ է և ճիշտ: Ենթադրում եմ, որ այլևս ուժեղ եւ թույլ կողմերին անդրադառնալու կարիք չկա:

3. Արդյո՞ք մշակված փաստաթղթերում նախատեսված են բավարար մեխանիզմներ՝ խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերում հավասարաչափ զարգացում ապահովելու համար: Արդյո՞ք գործընթացը ռիսկեր եւ վտանգներ չի պարունակում փոքր բնակավայրերի համար: Հաշվարկվա՞ծ են բոլոր ռիսկերը:

Ըստ իս ծրագրի իրականացման սկզբնական տարբերակում մոտավորապես նախատեսված են բավարար մեխանիզմներ՝ խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերում հավասարաչափ զարգացում ապահովելու համար, սակայն հետագա

գործընթացներն առավել արդյունավետ դարձնելու համար պետք է հաշվարկել բոլոր ռիսկերը, մասնավորապես՝ բնակավայրերի հեռավորությունը միմյանցից, ռելիեֆային առանձնահատկությունները, ֆինանսական միջոցների պլանավորումը, ընտրական համակարգի ճիշտ ներդրումը, համահունչ օրենսդրական փաթեթի ընդունումը, ՏԻՄ-Մարզպետարան հարաբերությունը և այլն:

4. Ի՞նչ ռիսկեր կարող են լինել, որոնք կնպաստեն տեղական իշխանությունների՝ բնակչությունից օտարվելուն կամ ՏԻՄ-երի՝ մեկ վայրում կենտրոնանալու հետեւանքով բնակչության համար ծառայությունների մատուցման առումով դժվարություններ ստեղծելուն:

«Շրջանային» տարբերակի դեպքում եւ ռիսկեր չեն տեսնում, իսկ «փնջայինի» դեպքում հարավոր է՝ ՔԿԱԳ, Նոտար և այլն, այդ մարմիններից ստացված տուրքերի ոչ ճիշտ բաշխում համայնքների միջև, որը նաև հիմա էլ է առկա:

5. Ստեղծվա՞ծ են բավարար երաշխիքներ՝ առավել արդյունավետ, գործունե կարող տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես՝ ավագանու, ձեւավորման համար: Ի՞նչ կարծիքի եք բնակավայրերի ընդհանուր ժողովի գաղափարի, համայնքի ղեկավարի ընտրության եղանակների (ուղղակի թե անուղղակի) մասին:

Այս հարցի շուրջ բացարձակապես դրական մոտեցում ունեն, ուղղակի ցանկանում եմ նշել, որ համայնքի ղեկավարը պետք է ընտրվի ուղղակի տարբերակով:

6. Արդյո՞ք ներկայացված մոդելներն իրոք ստեղծում են ֆինանսական ռեսուրսների առավել արդյունավետ ծախսման հնարավորություններ՝ թույլ տալով ավելի շատ միջոցներ ուղղել կապիտալ ծրագրերին ու ծառայություններին, քան վարչական ծախսերին:

Այո, ներկայացված մոդելներն իրոք ստեղծում են ֆինանսական ռեսուրսների առավել արդյունավետ ծախսման հնարավորություններ՝ թույլ տալով ավելի շատ միջոցներ ուղղել կապիտալ ծրագրերին ու ծառայություններին, քան վարչական ծախսերին, սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև աշխատատեղերին, որպեսզի մասնագետները հնարավորինս զբաղված լինեն:

7. Ենթադրվում է, որ խոշորացվող համայնքներն ունենալու են նոր որակի ենթակառուցվածքներ, ինչը պահանջելու է նաև համապատասխան ֆինանսական ռեսուրսների առկայություն: Ի՞նչ սկզբունքներով պետք է իրականացվի ենթակառուցվածքային բաշխվածությունը:

Միանշանակ համաչափորեն, որպեսզի ապահովվի կայուն զարգացում:

8. Լուրջ խնդիր է նաև բնակչության վստահությունը գործընթացի նկատմամբ: Արդյո՞ք տեղական հանրաքվեների արդյունքները պետք է որոշիչ լինեն այն դեպքում, երբ Սահմանադրության մեջ վերապահում է կատարված այդ մասով:

Յուրաքանչյուր գործընթաց պետք է իրականացվի Սահմանադրության համաձայն: Մտավախությունից խուսափելու համար անհրաժեշտ է բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը, տանել խոշորածավալ բացատրական և գործնական աշխատանքներ: Ինչ վերաբերում է տեղական հանրաքվեների մասին ՀՀ օրենսդրության վերապահումներին, ապա հնարավոր է օրենսդրական ակտերը համապատասխանեցնել միմյանց:

9. Ձեր կարծիքով, որո՞նք են այն հիմնական ռիսկերը, օբյեկտիվ եւ սուբյեկտիվ, որոնք կարող են էական խոչընդոտ հանդիսանալ բարեփոխումների իրականացման համար:

Իմ կարծիքով, բարեփոխումների իրականացման համար էական խոչընդոտ հանդիսանալու հիմնական ռիսկեր չկան, ուղղակի անհրաժեշտ է մի փոքր ուշադրություն դարձնել քաղաքացիական ակտիվիստներին և ճիշտ ծրագրավորել ֆինանսների բաշխումը:

10. Բարեփոխումների իրականացման ինչպիսի ժամկետներ եք առաջարկում: Ո՞ր տարբերակը (փուլային, միաժամանակյա եւ այլն) կարող է առավել արդյունավետ լինել: Ինչպիսի՞ն են Ձեր առաջարկությունները հանրային իրազեկման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ:

Առաջարկում եմ բարեփոխումների իրականացման փուլային տարբերակը, որը ժամանակի առումով փոքր-ինչ երկար կլինի, սակայն հանրությունը հնարավորություն

կունենա նկատելու քարեփոխման արդյունավետությունը՝ միաժամանակ վեր հանելով թերի կողմերը, որոնք ենթակա կլինեն ուղղման:

Ինչ վերաբերում է հանրային իրազեկման աշխատանքների կազմակերպմանը, ապա այն պետք է իրականացնել լայնածավալ և բազմակողմանի: